

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԱՐՏԱՇԷՍ Գ.Ի (Ք.Ե. 18-34) ՆՈՐԱՅԱՅՏ ԴՐԱՄԸ

ԵՂԻԱ ՆԵՐՍԷՍԻԱՆ

ArmNumSoc@aol.com

ԱՐՏԱՇԷՍ Գ. ԱՐՔԱՅ ՀԱՅՈՑ (Ք.Ե. 18-34)

Հայաստան Արտաշէս Բ.ի սպաննութենէն սկսեալ (Ք.ա. 20) կոռախնձոր դարձաւ Հռոմի եւ Պարթեաստանի միջեւ: Հայ թագաւորներ Հռոմի կողմէ կը նշանակուէին կամ ալ Պարթեաստան իր սեփական թելնածուն կը բազմեցնէր Հայաստանի գահին: Այս նորանշանակ թագաւորները մեծամասնութեամբ ընդունելի չէին հայութեան, կամ ալ կը հարկադրուէին ապաստան փնտռել այլուր:

Պարթեաստանի Արտաւան թագաւորը ջանաց Հայաստանի գահին բազմեցնել իր Որոնդէս որդին: Տիբերիոս կայսրը մերժեց Որոնդէսը եւ Հայաստան դրկեց Գերմանիկոսը որ խնդիրը լուծէ ընդունելի ձեւով: Գերմանիկոս Արտաշատ հասաւ Ք.Ե. 18ին եւ Պոնտոսի Փոլեմոն թագաւորին ու Փիոդոտրիս թագուհիին Ձենոն որդին հայերուն ընդունելի գտաւ: Ձենոն Հայաստան մեծցած էր եւ իւրացուցած հայկական սովորութիւնները, իսկ Փոլեմոն Հռոմի կամակատարն էր: Հռոմի համար իր որդին ալ հռոմէասէր կը նկատուէր եւ կը վայելէր Հռոմի համակրանքը: Գերմանիկոս մեծ հանդիսութեամբ Ձենոնը կարգեց հայոց թագաւոր, Արտաշատի մէջ: Ան Արտաշէս Գ. (Ք.Ե. 18-34) անունը ստացաւ:

Այս եզակի դէպքը նշանաւորելու համար Գերմանիկոս հատեց յատուկ արծաթեայ երկդրախմա եւ դրախմա: Որոշ դրամագէտներ կը խորհին թէ այս շատ հազուագիւտ դրամները հատուած են Կեսարիոյ մէջ²: Ուրիշներ կը համարին թէ այս դրամները կրնան Հայաստանի մէջ հատուած ըլլալ: Հայաստանի վերաբերող այս դրամները ունին հռոմէական պատկերատիպ եւ երրեք չեն նմանիր Արտաշէսեան Հարստութեան դրամներու ոճին³:

Ստորեւ անոնց նկարագրութիւնը.-

- Երես. Գերմանիկոսի կիսանդրին աջ դարձած է: Շրջագրութիւնն է GERMANICVS CAESAR TI. AVG. F. COS. II (Germanicus Caesar Tiberius Augustus filius consul II = Գերմանիկոս Կեսար, որդի Տիբերիոս Օգոստոսի, Կոնսուլ, երկրորդ անգամ): Կէտաւոր շրջափակ:
- Կոնակ. Գերմանիկոս կանգնած է աջին, զրաւաւորուած, գլուխը ձախ դարձած, ձախ ձեռքով բռնած երկար նիզակ մը,

Տոեալ.

իսկ աջով հայկական խոյրը կը գետեղէ Արտաշէսի գլխուն: Արտաշէս ծախին կանգնած է հանդիպահայեաց, գրահատրուած, իր ծախին վերէն վար խորագրութիւնն է ARTAXIAS. Գերմանիկոսի աջին վերէն վար խորագրութիւնն է GERMANICVS: Կէտաւոր շրջափակ: Ա. Երկդրախմա, 7,50 գրամ, 23 մմ. տրամագիծ. Բրիտանական Թանգարանի Հաւաքածոյ
Բ. Դրախմա, 3,14 գրամ, 19 մմ. տրամագիծ: Ֆրանսայի Ազգային Մատենադարանի Հաւաքածոյ:

Արտաշէս Գ.ի Նորայայտ Դրամը

Վերջերս յայտնաբերուեցան Արտաշէս Գ.ի վերագրուած պղնձեայ դրամներ: Ասոնց երեսին պատկերուած է հայկական խոյրը եւ ետին՝ ձի մը⁴: Այս դրամներուն կառուցումը եւ ծաւալը մեզի կը յիշեցնեն Կոմմագենէի պղնձեայ դրամներուն⁵ կառուցումը: Տեղին է յիշել որ Կոմմագենէի վերջին թագաւորները որոշ չափով հռոմէական քաղաքական ծիրին մէջ կը գտնուէին, Արտաշէսեան Հարստութեան վերջին թագաւորներուն նման: Իրենց հատած դրամներն ու Արտաշէս Գ.ի նորայայտ դրամները հռոմէական նահանգային դրամներուն կը նմանին:

Դրամին վրայ պատկերուած է հայկական խոյրը, աստղ մը, յունարէն տառ մը: Միայ կողմը քանդակուած է ձի մը դէպի աջ, իսկ այլ օրինակի մը վրայ՝ դէպի ձախ: Ընդհանուր առմամբ դրամը ունի անշի քան կրկնապատիկ ծանրութիւն քան Արտաշէսեան Հարստութեան արքաներուն մեծամասնութեան պղնձեայ դրամները: Այլ ուշագրաւ կէտ մըն է հայկական խոյրը, որ դրամի պատկերատիպին տիրապետող մասը կը կազմէ: Այս պատկերատիպը մեզի կը յիշեցնէ Մարկոս Անտոնիոսի արծաթեայ դենարիոսը⁶, որ հատուած է Ք.ա. 34ին⁷: Դրամի երեսին պատկերուած է Անտոնիոսին գլուխը աջ դարձած: Իսկ ետին քանդակուած է հայկական խոյրը դէպի աջ, վզկալով եւ ականջակալով: Խոյրին վերի մասին վրայ պատկերուած են երեք ութնամատեան աստղեր: Խոյրին ետեւը կը նշմարուին խաչաձեւուած նետն ու աղեղը, գործածուած հայ բանակի զինուորին կողմէ:

Չորս քաղկոս

1. Երես.

Հայկական խոյրը հինգ ժանիքներով ծախ դարձած, աջին՝ ութթեանի աստղ, վարը ծախին յունարէն Δ տառը, որ չորս միատր ըլլալը կը յայտնէ: Ժամը 11էն սկսելով աջ շրջագրութիւնն է ΘΕΟΙC CEBACTOIC KAI CAPI KAI IOYΛΙΑ (=Աստուածային Օգոստոս կայսեր եւ Յուլիայի): Կէտաւոր շրջափակ:

Կոնակ. Ցատկող ձի դէպի աջ: Ժամը 12էն սկսելով դէպի աջ շրջագրութիւնն է [BAC]APTAΞIOY TOY EB B ΠΟΛΕ ΚΑΙ ΠΥΘ[ΟΔωPI] (=Արքայ Արտաշէսի, որդի Փոլեմոնի եւ Փիթողորիսի): Կէտաւոր շրջափակ:

Տուեալ. Պղ., 10,74գ., առանցքային ուղղութիւն ժամը 10ին, Կարէն Վարդանեանի հաւաքածոյ:

Չորս քաղկոս

2. Երես. Հայկական խոյրը հինգ ժանիքներով ծախ դարձած, աջին՝ ութթեանի աստղ, վարը ծախին յունարէն Δ տառը, որ չորս միաւոր ըլլալը կը յայտնէ: Ժամը 11էն սկսելով աջ շրջագրութիւնն է ΘEOIC CEBACTOIC KAICAPI KAI IOYΛ.A (=Աստուածային Օգոստոս կայսեր եւ Յուլիայի): Կէտաւոր շրջափակ:

Կոնակ. Ցատկող ձի դէպի ծախ: Ժամը 11էն սկսելով դէպի աջ շրջագրութիւնն է B[ACAPTAΞIOY] TOY EK ΠΟΛΕ ΚΑΙ ΠΥΘOΔωPI (=Արքայ Արտաշէսի, որդի Փոլեմոնի եւ Փիթողորիսի): Կէտաւոր շրջափակ:

Տուեալ. Պղ., 9,63գ., առանցքային ուղղութիւն ժամը 7:30ին, Կարէն Վարդանեանի հաւաքածոյ:

Գոյութիւն ունին նմանօրինակ դրամներ, որոնց վրայ Արտաշէս անունը չէ արձանագրուած. դրամներու տարբեր խումբերու խորագրութիւնները կրճատուած են տարբեր ձեւերով: Դրամներուն ոմանց վրայ խոյրը ունի հինգ ատամներ. կան եւ այլ օրինակներ, որոնք ունին չորս ատամներով խոյր: Ծանօթ բոլոր նմանօրինակներուն վրայ ձին քանդակուած է դէպի աջ:

Չորս քաղկոս

3. Երես. Հայկական խոյրը չորս ժանիքներով ծախ դարձած, աջին՝ ութթեանի խոշոր աստղ, վարը ծախին յունարէն Δ տառը, որ չորս միաւոր ըլլալը կը յայտնէ: Ժամը 11էն սկսելով դէպի աջ այլաստեաժ շրջագրութիւնն է TOICPIATOIITACVICAIV: Կէտաւոր շրջափակ:

Կոնակ. Ցատկող ձի դէպի աջ: Ժամը 11էն սկսելով դէպի աջ այլաստեաժ շրջագրութիւնն է VOOACKOITIAOKVITVOOΔVIFI: Կէտաւոր շրջափակ:

Տուեալ. Պղ., 7,72գ., 23մմ, առանցքային ուղղութիւն ժամը 12ին, Եղիա Ներսէսեանի հաւաքածոյ:



Ա.



Բ.



1 (X)



1



2



3



Արտաշէս Գի նորայայտ դրամը

Տախտակ 1

Հետաքրքրականն այն է որ այս նորայայտ դրամներուն վաղ ընդօրինակութիւնները - թէեւ հարազատ թողարկութիւն - բայց անընթեռնելի եւ առեղծոածային էին⁸: Այս պատճառով ճշգրտօրէն չէին վերագրուած Արտաշէն Գ. արքային⁹ յաջորդող ժամանակաշրջանին: Նորայայտ թիւ 1 եւ 2 դրամները մեզի արտօնեցին ցարդ չվերագրուած դրամներուն պատկանելիութեան մասին մտածել: Այսպիսի նմանօրինակներէն ծանօթ են 30-40 հատ: Ֆրանք Քովաքս¹⁰ համոզուած է որ Արտաշէն Գ.ի մահէն ետք, եթէն ինը տարի շարունակեցին նոյնատիպ դրամներ թողարկել առանց Արտաշէն թագաւորի անուան արձանագրութեան՝ քանի որ այդ ժամանակամիջոցը անորոշութեան շրջան մըն էր, մինչեւ որ Հռոմ Հայաստան ուղարկեց Միհրդատը (Ք.ե. 43-51)¹¹: Սակայն կասկածէ դուրս է որ առոնք ծրագրուած են հեղինակութեան մը կողմէ, եւ ծանօթ նմանօրինակ դրամները կարելի եղած է խմբաւորել ըստ իրենց երեսի ու կոնակի կաղապարներուն: Նմանատիպ դրամներուն շրջագրութիւնները իմաստալից չեն երեւիր, որովհետեւ շատ կրճատումներ ունին եւ համբերատար բաղդատութիւն մը ցոյց կու տայ, թէ Արտաշէսի դրամին շրջագրութեան հետեւած ու այլասերած են: Ծանօթ օրինակներուն բաղդատութիւնը յառաջ բերած է վեց երեսի եւ չորս կոնակի կաղապարներ¹²:

Արտաշէսի նորայայտ դրամին երեսի ու կոնակի պատկերատիպերը մեզ կը մղեն լուրջ խորհրդածութեան:

Ինչպէս որ հռոմէական զոյգ դրամներուն վրայ նշմարուեցան (տե՛ս՝ տախտակ 1, նկար Ա եւ Բ), Արտաշէսի գլխուն հայկական խոյրը գետեղուեցաւ Տիբերիոս կայսեր ներկայացուցիչ Գերմանիկոսին կողմէ: Ուրեմն Արտաշէսի դրամի երեսին վրայի շրջագրութիւնը եւ հայկական խոյրին՝ դրամի պատկերատիպին տիրապետող մաս կազմելը, վերոյիշեալ թագադրութեան արարողութեան եւ մասնատրաբար Հռոմին՝ յարգանքի տուրք տալու ձեւ մը կը նկատուի: Այդ էր ժամանակակից դիւանագիտութեան պահանջը:

Ինչպէս ակնարկուեցաւ վերը, յունարէն Δ տառը դրամին հաւանաբար չորս քաղկոս կամ միաւոր ըլլալը կը շեշտէ:

Ութթեանի աստղը մեզի կու գայ հին հայոց հեթանոսական շրջանէն: Ան խորհրդանշանն է Միթրային, ասինքն հայոց Միհր չաստուածին՝ «անյաղթ արեւ աստուծոյ»: Նոյն ութթեանի աստղը կը նշմարուի¹³ Տիգրան Մեծի եւ իրեն յաջորդող բոլոր Արտաշէսեան արքաներուն խոյրերուն վրայ, առանց բացառութեան¹⁴:

Հին Հայաստանի մշակոյթին եւ ճարտարարուեստին կարեւոր մէկ մասը եղած է ձիաբուծութիւնը: Զիւրը գործածուած են գիղատնտեսութեան եւ փոխադրութեան համար: Հայաստանի լեռնոտ տարածութիւնը, ինչպէս նաեւ հայոց բանակի այրուծի զօրամասին համար ձիերը անհրաժեշտութիւն էին: Երուանդ արքան պարսից բանակին միանալով տրամադրեց 40,000 հետեակ զինուոր եւ 7000 այրուծի՝ մասնակցելու համար Արեւելայի ճակատամարտին, Ք.ա. 331ին, Աղեքսանդր Մեծի դէմ¹⁵: Ստրաբոն կը վկայէ, թէ իւրաքանչիւր տարի հայերը պարսից թագաւորին կը տրամադրէին 20,000 մտրուկ¹⁶: Նոյնպէս, ուրարտական շրջանին, Կարմիր Բլուրէն պեղուած հնութիւնները կը ցուցադրեն ձիերու նկարները հեծելագործերու հետ եւ մարտական կառքերու լծուած վիճակի մէջ¹⁷: Նմանապէս, Նշմարելի են մարտական կառքեր իրենց լծուած ձիերով կերտուած Տիգրան Մեծի¹⁸, Արտաւազդ Բ.ի¹⁹ եւ Տիգրան Գ.ի²⁰ դրամներուն վրայ: Առանձին ձիերու պատկերներ քանդակուած են Տիգրան Մեծի²¹, Տիգրան Գ.ի²² եւ Տիգրան Ե. ու Երատոյի²³ զուգագլուխ դրամներուն վրայ:

Արտաշէս Գ.ի նոր դրամին յայտնաբերումը հայ դրամագիտութեան պատմութեան համալրման համար օղակ մը եւս կ'աւելցնէ: Սակայն տակաւին յայտնի չէ թէ որու հեղինակութեան ներքեւ թողարկուած են այս դրամները:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Յակոբ Մանանդեան, *Երկեր*, Ա. Հապոր, Երեւան, ՀՀՍՀ ԳԱ Հրատ., 1978, էջ 304-306:

² Edward A. Sydenham, *The Coinage of Caesarea in Cappadocia*, London, Spink and Son, 1933. Reprinted in New York, Allen G. Berman, in 1978, էջ 32, No 6:

³ Honoré T. Duc de Luynes, "Médaille Inédite de Germanicus," *Revue Numismatique*, Paris, Vol. III, 1838, էջ 338-342:

⁴ Frank L. Kovacs, "Artaxias III and a Numismatic Enigma," *Armenian Numismatic Journal*, Series II, Vol. 10 (40), 2014, էջ 19-25, pl. 4:

⁵ Y. T. Nercessian, *Armenian Coins and Their Values*, Los Angeles, Armenian Numismatic Society, 1995, Nos. 187-243:

⁶ Զարեհ Պտուկեան, *Հայաստանի Վերաբերեալ Հռոմէական Դրամներ եւ Մեդալիոններ*, Վիեննա, Մխիթարեան Տպ., 1971, թիւ 5:

⁷ Պտուկեան կը քննարկէ այս դրամին հատանման թուականը ու կը ներկայացնէ բոլոր հեղինակներուն վարկածները: Իր եզրակացութիւնը այն է, թէ այս դրամը դաշնակից-հպատակութեան նշան մըն է,

հատանում Բ.ա. 36ին, երբ Արտաազդ լքեց պարթևները եւ Հռոմի դաշնակից դարձաւ (Պտուկեան, էջ 35):

⁸ Levon A. Saryan, "An Ancient Bronze Depicting an Armenian Tiara," *Spink Numismatic Circular*, Vol. XCIX, May 1991, No. 4, էջ 112:

⁹ Nercessian, *Armenian Coins*, No. 244:

¹⁰ Kovacs, էջ 23:

¹¹ Մանանդեան, *Քննական*, էջ 318. նաեւ՝ *Երկեր*, էջ 313:

¹² Kovacs, էջ 21:

¹³ Y. T. Nercessian, *Silver Coinage of the Artaxiad Dynasty of Armenia*, Los Angeles, Armenian Numismatic Society, 2006, pl. 1-96:

¹⁴ Այս ուղղութեամբ քննել *Արտաշէսեան Հարսութեան Դրամահարությունը, Արծաթեայ Դրամներ* գիրքին բոլոր տախտակներուն վրայի պատկերատիպերը (*Հայ ժողովրդի Պատմություն, Ա. Հոր.*, Երեւան ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1971, էջ 370. նաեւ՝ *Հայկական Սովետական Հանրագիտարան, Հոր. 6*, Երեւան, Տպ. Յ. Մեղապարտ, 1980, էջ 702):

¹⁵ Մանանդեան, *Քննական*, էջ 91. նաեւ՝ *Երկեր*, էջ 95. նաեւ՝ *Հայկական Սովետական Հանրագիտարան, Հոր. 1*, Երեւան, Տպ. Յ. Մեղապարտ, 1971, էջ 354-356:

¹⁶ *Հայկական Սովետական Հանրագիտարան, Հոր. 3*, Երեւան, Տպ. Յ. Մեղապարտ, 1977, էջ 126:

¹⁷ B.B. Piotrovskii, *Urartu, the Kingdom of Van and its Art*, New York and Washington, 1967. նաեւ Նոյնի՝ *Karmir Blur*, Leningrad, 1970. նաեւ G. Azarpay, *Urartian Art and Artifacts, A Chronological Study*, Berkley and Los Angeles, 19681

¹⁸ Bedoukian, *Coinage of the Artaxiads*, No. 90. նաեւ՝ Nercessian, *Armenian Coins*, Nos. 43-44:

¹⁹ Bedoukian, *Coinage of the Artaxiads*, Nos. 159-160. նաեւ՝ Nercessian, *Armenian Coins*, Nos. 123-124:

²⁰ Bedoukian, *Coinage of the Artaxiads*, No. 141. նաեւ՝ Nercessian, *Armenian Coins*, No. 136:

²¹ Nercessian, *Armenian Coins*, No. 121:

²² Bedoukian, *Coinage of the Artaxiads*, No. 144. նաեւ՝ Nercessian, *Armenian Coins*, Nos. 148-152:

²³ Bedoukian, *Coinage of the Artaxiads*, No. 162. նաեւ՝ Nercessian, *Armenian Coins*, No. 179:

A NEWLY DISCOVERED COIN OF ARTAXIAS III (A.D. 18-34)

(Summary)

Y. T. NERCESSIAN
ArmNumSoc@aol.com

Following the death of Artaxias II (20 B.C.), Armenia was weakened. Armenian rulers were being appointed by Rome, or Parthia tried to install its own candidates on the throne of Armenia. In many cases the newly appointed king was not acceptable to the Armenians and he was assassinated, expelled from the country, or forced to flee from Armenia and take refuge elsewhere.

Germanicus was sent by Emperor Tiberius to pacify Armenia and find a person acceptable to the Armenians. He crowned Zeno, the son of King Polemon of Pontus and Queen Pythodoris, as Artaxias III (A.D. 18-34). Germanicus issued silver Roman didrachms and drachms to commemorate the crowning of Artaxias.

Recently, a new bronze coin was discovered and the find published by Frank L. Kovacs. The coin can without doubt be attributed to Artaxias III. The obverse depicts a five-pointed Armenian tiara on the left, an eight-rayed star on the right, and (meaning, tetrachalcon) below on the left. The translation of the clockwise circular legend states, "To the Divine Augusti Caesar and Julia." On the reverse is engraved a prancing horse on the right (on some examples on the left). The translation of the clockwise circular inscription reads, "Of King Artaxias, son of Polemon and Pythodoris."

Additionally, there are some genuine early imitations with Armenian tiara and prancing horse. But these coins lack the name of King Artaxias III.

The discovery of this bronze coin attributed to Artaxias III adds another piece to the series of Armenian numismatic history. However, the exact authorship of the early imitations mentioned remains unknown.